ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. սեպտեմբերի 25-ից 30-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանի ՝ Ֆիլիպինների Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Վահե Հովհաննիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Քաղաք Մանիլա, Ֆիլիպինների Հանրապետություն, 2022թ. սեպտեմբերի 25-ից 30-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

   Ասիական զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն Ասիական զարգացման բանկի 55-րդ տարեկան հանդիպմանը՝ որպես Ասիական զարգացման բանկի Կառավարիչների խորհրդում Հայաստանի Հանրապետության կառավարչին փոխարինող անձ (փոխկառավարիչ):

6. **Քննարկված թեմաները՝**

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Կառավարիչների խորհրդի տարեկան հանդիպումները հարթակ են հանդիսանում ԱԶԲ վարչական, ֆինանսական և գործառնական ուղղությունների և վերջիններիս զարգացումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում աղքատության կրճատման և ներառական աճի ապահովման ուղղությունների բացահայտման համար: ԱԶԲ տարեկան հանդիպումները յուրահատուկ

պլատֆորմ են երկխոսության, համագործակցության և կապերի ամրադնդման համար: Դրանք հնարավորություն են ընձեռում երկկողմ հանդիպումներ ունենալ ԱԶԲ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և այլ երկրների ներկայացուցիչների հետ, քննարկել ինչպես համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ, այնպես էլ ՀՀ և ԱԶԲ համագործակցությանն առնչվող հարցեր: ԱԶԲ տարեկան հանդիպումները դարձել են Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրների քննարկման գլխավոր ֆորումը:

ԱԶԲ 55-րդ տարեկան հանդիպման շրջանակներում տեղի ունեցած քննարկումները ծավալվել են այնպիսի կարևոր ոլորտների շուրջ, ինչպիսիք են՝ ՀՀ-ում ներկա տնտեսական և քաղաքական իրավիճակը, ՀՀ և ԱԶԲ միջև մասնավոր հատվածի ֆինանսավորման ընթացիկ պորտֆելը և վերջինիս ընդլայնման հնարավորությունը, ԱԶԲ կողմից ՀՀ-ում հնարավոր նոր ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացումը և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԱԶԲ 55-րդ տարեկան հանդիպման օրակարգը հագեցած էր ԱԶԲ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ երկկողմ հանդիպումներով: Մասնավորապես՝

Ք. Մանիլա այցը մեկնարկել է ԱԶԲ մասնավոր հատվածի թիմի հետ հանդիպմամբ: Հանդիպման ընթացքում մանրամասն ներկայացվեց ՀՀ կառավարության կողմից մասնավոր հատվածի զարգացման և ֆինանսավորման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը, ինչպես նաև նշյալ ոլորտում բարեփոխումների օրակարգը: ԱԶԲ ներկայացուցիչները բարձր գնահատեցին ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները, և նշեցին, որ ՀՀ հետ ընթացիկ հանագործակցությունը դրական է գնահատվում: Հանդիպման ընթացքում նշվեց, որ ՀՀ կառավարությունը շարունակելու է աջակցել մասնավոր հատվածի զարգացմանը և պատրաստ է ավելացնել ֆինանսավորումն այդ ուղղությամբ: Միաժամանակ, այն ավելի հասցեական և արդյունավետ դարձնելու համար կարևորվեց ԱԶԲ հետ ակտիվ փոխգործակցության ապահովումը, և ընդգծվեց վերջինիս կողմից գիտելիքի և փորձի փոխանակման կարևորությունը: Միաժամանակ, հայկական կողմն առաջարկեց ԱԶԲ-ին կատարել ոլորտի գնահատում և վերլուծություն, որը հնարավորություն կտա բացահայտելու այն ուղղությունները, որոնց շրջանակներում կարող է դիտարկվել ԱԶԲ նոր պրոդուկտների և

ֆինանսավորման գործիքների կիրառումը: ԱԶԲ թիմը ողջունեց այս գաղափարը և պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ շարունակելու քննարկումներն այս ուղղությամբ:

Հաջորդ հանդիպումը ԱԶԲ Տնօրենների խորհրդում Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Արիֆ Բահարուդինի և վերջինիս տեղակալ Քերընն Մյուրեի հետ էր: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին ՀՀ ընթացիկ տնտեսական իրավիճակը, ինչպես նաև քաղաքական վերջին զարգացումները: Ավելին, հայկական կողմը նշեց, որ Հայաստանը մտադրություն ունի դառնալու Ասիական զարգացման հիմնադրամի (Asian Development Fund) դոնոր: ԱԶԲ ներկայացուցիչները մեծ ոգևորությամբ արձագանքեցին նշյալ գաղափարին և առաջարկեցին հայկական կողմին որպես դիտորդ ներգրավվել հիմնադրամի ռեսուրսների համալրման ԱԶՀ 13 (2021-2024) գործընթացներում, մինչև ԱԶՀ 14-ի մեկնարկը:

Միաժամանակ նշվեց, որ հայկական կողմը պաշտոնական գրությամբ արդեն իսկ դիմել է ԱԶԲ՝ դիտարկելու Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի հարավային հատվածի ֆինանսավորման և իրականացման հնարավորության հարցը՝ հիմք ընդունելով ԱԶԲ փորձը ճանապարհաշինական ծրագրերի իրականացման ոլորտում: ԱԶԲ ներկայացուցիչները ողջունեցին հայկական կողմի առաջարկը:

Միաժամանակ նշվեց, որ արտաքին աղբյուրներից, այդ թվում՝ ԱԶԲ-ից, ֆինանսավորվող ընթացիկ ծրագրերի արագությունը ներկայումս համարվում է սպասվածից ցածր: Ավելին, ներքին միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի առաջընթացը նույնիսկ ավելի բարձր է, քան արտաքին աղբյուրներից ֆինանսավորվողները: Այս առումով ՀՀ կառավարությունը պատրաստ է սերտորեն աշխատել ԱԶԲ-ի հետ՝ ընթացիկ ծրագրերի սահուն և ժամանակին իրականացմանը նպաստելու նպատակով: Միաժամանակ առաջարկվեց համատեղել ջանքերը՝ բարձրացնելու ԱԶԲ ծրագրերի իրականացման արագությունը Հայաստանում: Որպես վերջինիս նպաստելու միջոց, հայկական կողմն առաջարկեց ԱԶԲ-ին դիտարկել ԱԶԲ հայաստանյան գրասենյակում տրանսպորտի ոլորտը և գնումների ոլորտը համակարգող մասնագետների ներգրավման հնարավորությունը, որոնք մշտապես կգտնվեն Հայաստանում և տեղում կհամակարգեն իրենց վերապահված ոլորտները: ԱԶԲ ներկայացուցիչները իրենց պատրաստակամությունը հայտնեցին շարունակելու քննարկումները այդ ուղղությամբ:

Հաշվի առնելով ՀՀ քաղաքական վերջին զարգացումները, նույն օրը հայկական պատվիրակությունը հանդիպում ունեցավ «Փխրուն և հակամարտության ազդակիր

իրավիճակներում» (Fragile and Conflict-Affected Situations) գտնվող երկրների հանդեպ մոտեցումները համակարգող թիմի ներկայացուցչի հետ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ԱԶԲ հայաստանյան գրասենյակի հետ համագործակցելով՝ դիմել ԱԶԲ՝ դիտարկելու ՀՀ-ում փխրունության և դիմացկունության մասին վերլուծություն անելու հնարավորությունը:

Նույն օրը հայկական պատվիրակությունը նաև առանձին հանդիպում ունեցավ ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության տնօրեն Եվգենի Ժուկովի թիմի հետ: Հանդիպման ընթացքում հայկական կողմը ևս մեկ անգամ ընդգծեց ԱԶԲ կարևորությունը Հայաստանում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի համար: Քննարկվեցին նաև ընթացիկ համագործակցությունն էլ ավելի արդյունավետ դարձնելու հնարավորությունները, կարևորվեցին ԱԶԲ կողմից փորձի փոխանակման և կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնությունները: Հայկական կողմն իր պատրաստակամությունը հայտնեց նաև նպաստելու ՀՀ ՖՆ ներգրավվածության մեծացմանը ԱԶԲ հետ համատեղ իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Հաջորդ օրը կայացավ հանդիպում Հայաստանն ընդգրկող երկրների խմբի հետ: ԱԶԲ Գործադիր տնօրենի և վերջինիս թիմի կողմից ներկայացվեցին Հայաստանն ընդգրկող ընկերակցային խմբի երկրների տնտեսական իրավիճակը և վերջին զարգացումները, 2023-2025թթ. առաջնահերթությունները, ընթացիկ տարվա մայիս-սեպտեմբեր ամիսների հաշվետվությունը, ինչպես նաև քննարկվեց Ասիական զարգացման հիմնադրամի միջանկյալ հաշվետվությունը:

ԱԶԲ տարեկան հանդիպման կարևորագույն հանդիպումներից էր սեպտեմբերի 29-ին կայացած ԱԶԲ Կառավարիչների Գործարար նիստը, որին ԱԶԲ Նախագահի գլխավորությամբ մասնակցում էին բոլոր պատվիրակությունները: Հանդիպման մեկնարկին հաստատվեցին ընթացակարգային մի շարք փաստաթղթեր, ինչից հետո մասնակից պետությունները սկսեցին հանդես գալ առանձին ելույթներով: Հայկական պատվիրակության ղեկավարը նույնպես հանդես եկավ առանձին ելույթով: Մասնավորապես, հայկական կողմն անդրադարձ կատարեց Ադրբեջանի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքի վրա վերջին հարձակմանը և հայկական կողմի կրած կորուստներին: Կարևորվեց նաև ԱԶԲ դերակատարումը ինչպես տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման, այնպես էլ գիտելիքի և փորձի փոխանակման ուղղություններով:

Հաջորդ օրերին հայկական կողմի պատվիրակությունը ունեցավ մի շարք հանդիպումներ ԱԶԲ առանձին ոլորտային վարչությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես.

Առանձին հանդիպում կայացավ ԱԶԲ տրանսպորտի թիմի հետ: Հայկական կողմը ևս մեկ անգամ ընդգծեց Հյուսիս-հարավ ներդրումային ծրագրի հարավային հատվածի կառուցման շրջանակներում ԱԶԲ ներգրավվածության կարևորությունը: Մասնավորապես, ընդգծվեց ԱԶԲ փորձը ճանապարհաշինական ծրագրերում և նշյալ ոլորտում ՀՀ հետ ծավալած արդյունավետ համագործակցությունը, կարևորվեց հատկապես նոր ծրագրի նախագծման փուլում ԱԶԲ հետ ակտիվ քննարկումների և խորհրդատվությունների անցկացումը, ինչը թույլ կտա ունենալ էլ ավելի որակյալ ծրագիր և նվազեցնել իրականացմանն առնչվող ռիսկերը: ԱԶԲ թիմը ողջունեց հայկական կողմի նախաձեռնությունը և ցանկություն հայտնեց քննարկելու տրանսպորտի ոլորտում ՀՀ առաջնահերթությունները՝ ԱԶԲ աջակցությունը ավելի հասցեական դարձնելու համար: Միաժամանակ, հայկական կողմը ներկայացրեց տեխնիկական աջակցության և տրանսպորտի ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման այն կարիքները, որոնց ուղղությամբ ԱԶԲ աջակցությունը էապես կնպաստի Հայաստանում տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտներում արդյունավետության բարձրացմանը: Հաշվի առնելով ԱԶԲ պորտֆելում տրանսպորտի ծրագրերի զգալի կշիռը՝ ևս մեկ անգամ նշվեց ԱԶԲ հայաստանյան գրասենյակում տրանսպորտի ոլորտը համակարգող մասնագետի ներգրավման կարևորության մասին:

Հայկական պատվիրակությունը քննարկում ունեցավ նաև ԱԶԲ կողմից առաջարկվող Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագրի ներքո առաջրկվող նոր բաղադրիչների (Շիրակի ավտոբուսային հավաքակայանի կառուցում, Շիրակ փողոցի այլընտրանքային ճանապարհի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և նախագծում, Զվարթնոց օդանավակայանից դեպի Երևան այլընտրանքային ճանապարհի նախագծում, ինչպես նաև համայնքային տարածքի «կանաչ քաղաքային տարածքի» վերածում) վերաբերյալ: Հայկական կողմը նշեց, որ նշյալ գործընթացները կարելի է դիտարկել առաջիկա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման շրջանակներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության առաջնահերթությունները, ինչից հետո արդեն կդիտարկվի վերջիններիս ֆինանսավորման աղբյուրների հարցը: Հետևաբար, հայկական կողմը, հիմք ընդունելով ներկա առաջնահերթությունները, դիմել է ԱԶԲ-ին՝ դիտարկելու Իսակով-Արշակունյաց

ճանապարհահատվածի կառուցման ծրագրի իրականացման նպատակով վարկային միջոցների տրամադրման հնարավորությունը, մինչդեռ Շիրակի ավտոբուսային հավաքակայանի կառուցումը, որոնք առաջարկվել են Երևանի քաղաքապետարանի կողմից, ունի լրացուցիչ ներքին քննարկման և հիմնավորման անհրաժեշտություն:

Ինչ վերաբերում է Զվարթնոց օդանավակայանից դեպի Երևան այլընտրանքային ճանապարհի նախագծմանը, ապա դրա վերաբերյալ ևս նախնական քննարկումներ են տեղի ունեցել Երևանի քաղաքապետարանի հետ և վերջիններիս տեղեկացվել է, որ կան պարզաբանման ենթակա մի շարք խնդրահարույց հարցեր (օրինակ՝ հողերի օտարում, վերաբնակեցում և այլն), որոնց պատասխանների առկայության դեպքում միայն հնարավոր կլինի քննարկել վերջինիս նախագծման անհրաժեշտությունը:

Ամփոփելով՝ հայկական կողմը ևս մեկ անգամ նշեց, որ նոր առաջարկվող ծրագրերը նախ և առաջ պետք է գնահատվեն կառավարության ծրագրով նախատեսված առաջնահերթությունների համատեքստում՝ բացառելով բյուջետային գործընթացից դուրս և դրան զուգահեռ առանձին ընթացակարգերով նոր վարկային ծրագրերի նախաձեռնությունները: Միաժամանակ, առաջարկվեց նշյալ հարցերին անդրադառնալ ՀՀ կառավարության ներքին քննարկումներն ավարտելուց հետո:

Առանձին հանդիպում կայացավ նաև ԱԶԲ Նախագահի տեղակալ Աշոկ Լավասայի հետ: Կողմերը քննարկեցին ընհանուր համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Մասնավորապես, հայկական կողմը ևս մեկ անգամ ընդգծեց ՀՀ կառավարության մտադրությունը գործադրելու բոլոր ջանքերը՝ շարունակելու և էլ ավելի ընդլայնելու ԱԶԲ հետ համագործակցությունը: ԱԶԲ Նախագահի տեղակալը նշեց, որ ԱԶԲ դիտարկում է Հայաստանում նաև ոչ սուվերեն ֆինանսավորման ընդլայնման հնարավորությունը և առաջարկեց համատեղ քննարկել այն ուղղությունները, որոնք կարող են ընդգրկվել առաջիկա համագործակցության շրջանակներում: Կարևորվեց ներկայումս ԱԶԲ իրականացվող բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում պետություն-մասնավոր հատված համագործակցությանն առնչվող օրենսդրական փաթեթի մշակման շրջանակներում ԱԶԲ աջակցությունը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունը ակտիվ աջակցություն է ցուցաբերում մասնավոր հատվածին և պատրաստ է ավելացնելու վերջինիս ֆինանսավորումը՝ առաջարկվեց միասին իրականացնել ոլորտի գնահատում և մշակելու նոր

գործիքներ և մեխանիզմներ՝ օժանդակությունն ավելի արդյունավետ դարձնելու համար: Ավելին, հայկական կողմն առաջարկեց շարունակել համագործակցությունը նաև նշյալ ոլորտում գիտելիքի և փորձի փոխանակման, ինչպես նաև կարողությունների զարգացման ուղղությամբ՝ հաշվի առնելով, որ առանց դրա հնարավոր չէ ապահովել նոր ներդրված կարգավորումների պատշաճ կիրառումը: ԱԶԲ թիմը պատրաստակամություն հայտնեց աջակցելու հայկական կողմին նաև այս ուղղությամբ, և համաձայնություն ձեռք բերվեց շարունակելու քննարկումները:

Տարեկան հանդիպումը եզրափակվեց ԱԶԲ առողջապահության թիմի հետ հանդիպմամբ: Քննարկվեց նշյալ ոլորտում նոր ծրագրի իրականացման հնարավորությունը, վերջինիս շրջանակը: ԱԶԲ թիմը նշեց ՀՀ հետ ծավալվող արդյունավետ համագործակցության վերաբերյալ և պատրաստակամություն հայտնեց շարունակելու սերտորեն աշխատել ՀՀ առողջապահության նախարարության հետ, ինչպես նաև վերջինիս տրամադրելու աջակցություն՝ ծրագրի նախապարտաստման և այն սահմանված կարգով բյուջետային գործընթացում ներառելու նպատակով: Միաժամանակ նշվեց, որ առաջիկայում նախատեսվում է ԱԶԲ առողջապահության թիմի այցը Հայաստանի Հանրապետություն, որի ընթացքում առավել մանրամասն կքննարկվեն առաջիկա ծրագրի հնարավոր ուղղությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ասիական զարգացման բանկի պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղելու ջանքերը ՀՀ և ԱԶԲ միջև համագործակցության շրջանակի և փոխգործակցության ընդլայնման նպատակով, ինչպես նաև ապահովելու ընթացիկ և առաջիկայում նախատեսվող ծրագրերի ներքո ակտիվ ներգրավվածությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

04.10.2022թ.